
ՊՐՈԳ. ՀԱԿՈՒ ՄԱՆԱՆԳՅԱՆ

Ն Յ Ո Ւ Թ Ե Ր

Հին ՀԱՅԱՍՏԱՆԻ ՏՆՏԵՍԱԿԱՆ ԿՅԱՆՔԻ ՊԱՏՄՈՒԹՅԱՆ

Ժամանակագրություն

II

Արտատպված Հ. Ս. Խ. Հ. Պետհամալսարանի Գիտական
Տեղեկագրի № 4-ից

ԳՐԱՌԵՊ. Պ 856 Բ. ՏԻՐԱԺ 50. ՊԱՏՎԵՐ Պ 3410. ՀԱՅԳՈՐԴԱՆԻ ԶՐԳ ՏՊԱՐԱՆ

ՀԱՎՈՐ ՄԱՆԱՆԴՅԱՆ**ՆՅՈՒԹԵՐ ՀԻՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՏՆՏԵՍԱԿԱՆ ԿՅԱՆՔԻ
ՊԱՏՄՈՒԹՅԱՆ (II)**

1. **ԲԵՆՏԵՍԱԿԱՆ**=feod, Lehn յեվ **ԲԵՆՏԵՍԱԿԱՆ**=fendataire, Lehnsträger.

Հայաստանի նախարարական կազմակերպության առանձնահատկություններն ուսումնասիրելիս՝ առանձնապես ինձ հետաքրքրում էր հողատիրության խնդիրը և, մանավանդ, պայմանական հողատիրության՝ feodum-ի կամ Lehn-ի գոյությունը հին Հայաստանում: Ինչպես հայտնի է, feodum-ը կամ Lehn-ը կազմում էր Արևմտյան Յեվրոպայում միջնադարյան ֆեոդալիզմի հիմնական հատկանիշներից մեկը: Հարկավոր էր ինձ պարզել, թե արդյոք գոյություն չէ՞ն ունեցել նախարարական Հայաստանում ևս արեմայան feodum-ը կամ նման հողատիրական կարգեր:

Այդ կարևոր խնդրի ուսումնասիրության ընթացքում իմ ուշադրությունը գրավեց Ստեփանոս Որբելյանի պատմության մեջ «Խոստակդար» բառը, վորի նշանակությունը, իմ կարծիքով, վերջնական կերպով դեռ լուսաբանված չէ: Այն նշանակությունը, վոր յես վերագրելու յեմ «Խոստակդար» բառին, այնքան կարևոր է հայկական ֆեոդալիզմի պարզաբանման համար, վոր յես անհրաժեշտ եմ համարում մանրամասն առաջ բերել մատենագրական, ինձ հայտնի, բոլոր հատվածները, վորոնց մեջ հիշատակված են «Խոստակդար» և «Խոստակ» բառերը:

Այդ յերկու բառը հանդիպում են Մովսես Կաղանկատվացու և Ստեփանոս Որբելյանի մոտ հետևյալ վկայություններում:


1. Աղվանից Վաչագան արքայի 6-րդ կանոնում.

«Վանաց երէց կաւ վանական ոք՝ եթէ ի վանացն պայթանք առնէ ե ի վերայ յայտ լինի, անարգեսցին զնա և ի տեղոյն ի բաց արտացեն, և զխոսակց յեկեղեցին կալցեն» («Մովսեսի Կաղանկատվացու, Պատմութիւն Աղուանից աշխարհի», հրատ. Մ. Եմինի, Մոսկվա 1860, Ա. Գլ. ԻԶ, էջ 66—67):

2. «Ստեփանոսի Օրբելեան արքեպիսկոպոսի, Պատմութիւն նահանգին Սիսական», Թիֆլիս 1911, Գլ. ԼԹ, էջ 206.

«Ետու ևս տէր Փիլիպպէ զԲերդկաներէնոյ զկէսդ Սառնաքարին փոխան, և զկէսդ սուրբ Եկեղեցւոյդ. և չիշխէ ոք հեռացնել՝ ոչ եղբայր և ոչ որդի և ոչ յիմ խոստակդարացի»:

3. Նույնը, Գլ. ԼԹ, էջ 207.



«Յերկերերու և ինսուսն երեք թուականութեանս Հայոց, որպէս կամ եղև ինձ Փիլիպպէի՝ որդւոյ Վասակայ, Սիւնեաց տեառն, ետու զՏաթև վասն իմ հոգեացս ի ձեզ ի Տէր Դաւիթ՝ Սիւնեաց կախկոպոս. յիմ հօրէն յիս հրիտակ հասեալ էր. անխուէշքարէ (°) ամինայն սահմանօք, լերամբ և դաշտիւ, այգօք և ընկոյղօք, յարգագետնովք և օղակացանով և որ ինչ համօրէն սահմանք են. և մի ոք իշխեսցէ յետ իմ անցման, իմ որդիք կամ եղբարք կամ այլ խոստակդարճ հեռացուցանել զայդ գիւղդ յայդ եկեղեցւոյդ ե ի սուրբ խաչէդ»:

4. Նույնը, Գլ. Խ, եջ 219.

«Եւ շէն մի Մաճանուն ի Բաղաց դաւառի, որ նախ տեառն Ատրնբեր-սէհի՝ Սիւնեաց տեառն և իմ եղբօր, ինձ էր տուեալ, և յետ այնորիկ Հրահատայ, իմ տեառնն, գնեալ էր յիմ եղբորէն, և ինձ վաճառեալ և հոգեցատուր արարեալ՝ ետու ես Թուպիդիւտ զայդ շէնդ լերամբք և դաշտով, մարգով և արտով, դետով, ջրով և ցամաքով, ծառովք և տնկովք ի սուրբ խաչէ ի Տիր Սաղօմոն՝ Սիւնեաց կախկոպոս... Եւ մի ես և մի իմ եղբօրորդիք եւ այլ խոստակդարճ պայքարել և համարել կալ մի իշխեսցեն»:

5. Նույնը, Գլ. ԽԳ, եջ 238.

«Եւ յայսմհետէ մինչև հաւիտեան այս լիցի սահման Տաթևոյ սուրբ ուխտիս. և մի ոք իշխեսցէ այսմ հակառակել՝ մի Բաղացիք և մի Որոտնեցիք և մի Վաղանդացիք, մի Շնհէրացիք և մի Նորեցիք, եթէ ոք ընդ հակառակս ելանէ ի մերոց կամ յօտաւաց, յաւագաց կամ ի ձեռնաւորաց եւ ի խոստակդարաց կամ ի ճանաչեաց, ի սուրբ Ներորդութենէն որոշեալ լիցի և յերից սուրբ ժողովոցն նշովեալ եղիցի»:

Հայկազյան բառգրքի աշխատակիցները «խոստակ»-ը հասկացել են այս հատվածներում, իրենք խոշտակ, զաւակ, մանուկ, ժառանգ, իսկ «խոստակդար»՝ իրենք խոշտակ յետագայ, այսինքն՝ զաւակ զաւակի, յետնորդք, թոռունք: Նույն բառգրքում «խոշտար» բառին տրվում է հետևյալ լուսաբանությունը. «խոշտար կամ խոստար, որ և խոստակ՝ մանուկ, տղայ, զաւակ, սան, համբակ, ժառանգ որբացեալ: «խոստակ» և «խոստակդար» բառերի այս նշանակությունը, ինչպես տեսնում ենք, հիմնված է այդ բառերի ստուգաբանական ծագման վրա՝ «խոստակ—խոշտակ—խոստար—խոշտար»: Այդ ստուգաբանությունը սակայն ճիշտ չէ. ուրեմն՝ անընդունելի պիտի համարել նաև վերոհիշյալ ամբողջ բացատրությունը:

Նույն բառերի ստուգաբանական ուղիղ մեկնությունը տվել է արդեն պրոֆ. Հ. Հյուբշմանն իր Armenische Grammatik աշխատության մեջ (եջ 161): Ըստ Հյուբշմանի «խոստակ» նշանակում է «Güter, Besitz», այսինքն՝ «կալված, ստացվածք» (= np. x'vāsta «Güter, Besitz»), իսկ «խոստակդար» նշանակում է «der Erbe», այսինքն՝ «ժառանգ» (= phil. x'vāstakdār «der Erbe. Pand-nāma 80, eigentlich «Besitzhalter»):

Հյուբշմանի այս մեկնությունից հետո միանգամայն հասկանալի չէ դառնում վերև առաջ բերված Աղվանից Վաչագան արքայի վեցերորդ կանոնը. «Խոստակն յեկեղեցին կալցեն» պետք է հասկանալ այն իմաստով,

վոր հանցավոր «վանաց երէց»-ից կամ «վանական»-ից յեկեղեցին առնում եր վնջ թե նրանց վորդիններին, ինչպես մինչև այժմ յանթաղրել են¹, այլ նրանց կալվածները կամ հողարածինները:

Այս կանոնն իր բովանդակությամբ համապատասխանում է Շահապիվանի ժողովի յերկրորդ և «Ներսիսի կաթողիկոսի և Ներշապետյ Մամիկոնէից հպիսկոպոսի» հինգերորդ կանոններին, վորոնք նույնպես վերաբերվում են իրանց կոչմանն անհամապատասխան՝ աղետ կամ հանցավոր յեկեղեցականներին:

«Եթէ կրօնաւոր երէց, — ասված է Շահապիվանի Բ. կանոնում, — գտցի ի պղծութեան և ի պոռնկութեան կամ յայլ դործս չարիաց և սառուղիալ վկայիւք, քահանայութիւնն լուծցի և յեկեղեցի ոյ քաժնէ հեռացեալ լիցի. յ դրամ տուգանս տացէ և ի կարօտեալս բաշխեսցեն. եթէ երէց, եթէ սարկաւազ՝ կանոնս այդ կացցէ, և նոքա ի կարգ զինուորութեան կացցեն և ի հարկս արքունի, և ընդ պաշտօնեայս մի խառնեսցին» (տես կանոնագիրք Հայոց, հրատ. Արսեն Ղլտճյանցի, Թիֆլիս 1914, էջ 61):

Իսկ «Ներսիսի կաթողիկոսի և Ներշապետյ Մամիկոնէից հպիսկոպոսի» հինգերորդ կանոնը սահմանում և, վոր

«ագետք մի իշխեսցեն մտից սրբոյ եկեղեցւոյ, զի անիրաւ է, վասն անուսումնութեանն ընդ զինուորս կացցեն և զհայրենի հող յեւ ջուր կալցեն, և յարքունիս հարկ, և զորդիս ի դպրոց տացեն, զի ուսցին» (Կանոնագիրք Հայոց, հրատ. Ա. Ղլտճյանցի, էջ 109):

Վերահիշյալ կանոններում՝ «խոստակն յեկեղեցին կալցեն», «յեկեղեցւոյ բաժնէն հեռացեալ լիցի» և «զհայրենի հող և ջուր կալցեն»՝ միևնույն իմաստն ունեն: Հանցավոր կամ տղետ կրոնավորներից և քահանաներից յեկեղեցին, ինչպես տեսնում ենք, յետ եր առնում նրանց անշարժ գույքը, հողն ու ջուրը, վորովհետև այդ գույքը յ'եկեղեցու օրածին»-ն եր:

Նախորդ աշխատություններիցս մեկում յես արդեն մատնանիշ եյի արել, վոր դեռևս Արշակունյաց թագավորության ժամանակ, քրիստոնեության տարածման սկզբնական իսկ շրջանում, հողևորականությանը տրված են յեղել հատուկ հողաբաժիններ²: Այդ հողարածինների վերաբերմամբ, ինչպես պարզ յերևում է վերև առաջ բերված կանոններից, նաև Դվնի ժողո-

¹ Տես История Агван Моисея Каганкатвацци, прв. К. Патканьяна, С.-Петербург 1861, էջ 37: «Նստակն ի յեկեղեցին կալցեն» Գ. Պատկանյանը թարգմանել է «сидеть в церкви», սակայն ծանոթության մեջ նա հայանում է, վոր այդ թարգմանությունը կասկածելի չի: Մինչևույն սխալ յեթադրությունն արված է նաև Վաչագանի կանոնների իմ գերմաներեն թարգմանության մեջ և «խոստակն ի յեկեղեցին կալցեն» թարգմանված է «das Kind aber soll man in die Kirche nehmen», տես Beiträge zur albanischen Geschichte, Leipzig 1897, էջ 46:

² Տես «Դիտողություններ հին Հայաստանի շինականների դրության մասին մարդպետության շրջանում», ՀՍԽՀ Պետ. Համալսարանի Գիտ. Տեղեկագիր № 1, Յերևան 1925, էջ 13—17:

վի ութերորդ կանոնից, հողերակալներն ունեցել են միայն տիրության և ոգտագործման իրավունք, իսկ գերագույն սեպականության իրավունքը պատկանել է յեկեղեցուն: Ոգտատիրության (dominium utile) այդ իրավունքը յեղել է ժառանգական, այսինքն՝ այդ հողաբաժինները հողերակալներն իրավունք են ունեցել թողնել իբրև ժառանգություն իրանց վորդիններին կամ մերձավորներին¹: Հասկանալի յե, ուրեմն, թե ինչու Ներսեսի ու Ներշապուհի հինգերորդ կանոնում այդ «հողն ու ջուրը» անվանվում է «հայրենի»:

Հողատիրության այս ձևը, անշուշտ, պայմանական եր: Հողերակալները վերահիշյալ գույքը, հողն ու ջուրը, ստացել եյին իրանց հողեր «ծառայութեան» համար: Յեթե այդ «ծառայութիւն»-ն անհնարին եր դառնում նրանց տգիտության կամ ծանր հանցավորության պատճառով՝ յեկեղեցին իրավունք ունեւր այդ գույքը յեա գրավել և տալ «արժանաւոր»-ներին:

Վաչագան արքայի վեցերորդ կանոնը խիստ կարևոր է ու ուշագրավ այն տեսակետից, վոր այդ կանոնում «եկեղեցւոյ բաժին» նույն այդ անշարժ գույքն անվանվում է «խոստակ»: «Խոստակ»-ը, ուրեմն, ինչպես կարելի յե յենթադրել, հիմնվելով վերահիշյալ բացատրութիւններ վրա, այն հողաբաժիններն են կամ անշարժ գույքը, վոր հատկացվել են հողերակալներին նրանց հողեր «ծառայութեան» համար իբրև dominium utile, այսինքն՝ վոչ իբրև լիակատար սեպականություն, այլ ժառանգական ոգտատիրության իրավունքով: Դժվար չե կռահել, վոր հողատիրության այդ ձևը քրիստոնեական յեկեղեցին ընդորինակած պիտի լինի նախարարական Հայաստանի աշխարհիկ կենցաղից: Պրոֆ. Նիկ. Ադոնցը շատ ուղիղ գիտել եր, վոր հայ յեկեղեցին, գտնվելով նախարարական միջավայրի աղգեցություն տակ, յուրացրել եր նախարարական կազմակերպության պատրաստի ձևերը և մեծ հափերով յենթարկվել եր ֆեոդալականացման, կամ ավելի ճիշդը՝ նախարականացման²:

Ի նկատի ունենալով այդ աղգեցությունը, ինձ թվում է, կարելի յե յենթադրել, վոր նախարարական Հայաստանում «խոստակ» են անվանվել բացի վերահիշյալ հողաբաժիններից նաև այն հողերը կամ անշարժ գույքը, վորոնք կալվածատեր սյուղերենների կողմից տրվել են «ազատ»-ներին իբրև dominium utile, այն պայմանով, վոր «ազատ»-ները հողատու այս «տէր»-երի հանդեպ կատարելու եյին գինվորական և այլ պատվավոր «ծառայութեան» պարտականություններ: Այս վերջին իմաստով «խոստակ»-ը կատարելապես համապատասխան կլինի feodum-ին (=ֆոնս. fief, գերմ. Lehn):

Վոր այս յենթադրությունն անհիմն չե, այդ ցույց են տալիս «խոստակդար» բառի վերաբերյալ վերև առաջ բերված վկայությունները: Իմ

¹ Տե՛ս «Կանոնք Դուռայ Ժողովոյն», Ը. Կանոնագիրք Հայոց, հրատ. Ա. Ղազարյանի, էջ 124—126:

² Н. Адонц, Армения в эпоху Юстиниана, С.-Петербург 1908, էջ 322, 361 կր:

կարծիքով, «խոստակդար»-ն այդ վկայություններում նշանակում է «խոստակ»-առու, այսինքն՝ feudatarius, feudataire կամ Lehnshalter,

Պրոֆ. Հ. Հյուրշմանը, ինչպես տեսանք, «խոստակդար»-ը թարգմանում է «Erbe»՝ «ժառանգ», բայց, ի նկատի ունենալով «խոստակ» բառի իր սգուգաբանությունը, ավելացնում է՝ «eigentlich Besitzer»՝ «իսկապես կալվածատու»:

Ակադեմիկոս Մ. Բրոսսեն իր «Histoire de la Géorgie» աշխատության մեջ¹ մերժում է Հայկազյան բառգրքի վերոհիշյալ մեկնությունը, վորը, ինչպես տեսանք, արգյունք էր սխալ ստուգաբանության, և հենվելով Մ. Դորնի ցուցմունքների վրա՝ յենթադրում է, վոր «խոստակ»-ը նշանակում է «richesse»՝ «հարստություն», իսկ «խոստակդար»՝ «un intendant, un surveillant des biens»՝ «պերակացու կամ հարստությունների վրա հսկող»։ Հիմնվելով այս մեկնության վրա՝ «խոստակդար»-ը նա համարում է հոմանիշ «ձեռնաւորի» և թարգմանում է «employé»՝ «պաշտոնյա»:

Մինչև այժմ վոչ վոք ուշադրության չէ առել, վոր «խոստակ»-ն իրավական իր բովանդակությամբ համապատասխանում է միջնադարյան ֆեոդին և, հետևաբար, «խոստակդար»-ը, պարզական ընդ վերջավորությամբ, նշանակել է, հավանաբար, «խոստակ»-առու (=գերմ. Lehnshalter):

Այս յեզրակացությունը ստացվում է, իմ կարծիքով, վոչ միայն «խոստակդար» բառի ստուգաբանական վերլուծումով, այլ և Ստեփանոս Որբելյանի վերոհիշյալ վկայությունների ուշադիր քննությամբ:

Ինչպես հայտնի է, Ստեփանոս Որբելյանն իր պատմության մեջ քաղվածորեն զետեղել է այն վավերագրերի պատճենները, վորոնք վերաբերվում են «Սիսական Նահանգ»-ի յեկեղեցական կալվածներին, Վերև առաջ բերված բոլոր վկայությունները գտնվում են հենց այդ կարևոր քաղվածքներում:

Այդ վկայություններից յերկրորդը (Ստեփ. Որբ. եջ 2(6) վերաբերվում է «Բերդկաներէջ» գյուղին, վոր 839 թվին Սյունյաց «Փիլիպպէ» իշխանը տվել էր Սյունյաց Տեր Դավիթ յեպիսկոպոսին՝ կեսը Մառնաքարին փոխան և կեսը յեկեղեցուն: Յերրորդ վկայության մեջ ասված է, վոր Նույն «Փիլիպպէ» իշխանը 844 թվին նվիրել է Տաթևի Նույն Ս. Պաշ յեկեղեցուն Տաթև գյուղը (Ստեփ. Որբել. եջ 206—208): Չորրորդ վկայությունից իմանում ենք, վոր 867 թվին Գուգդիդուխտը՝ «Փիլիպպէ»-ի քույրը և Սյունյաց Հրահատ իշխանի կինը, «անորդի գոլով», «Մաճ շէնը»՝ «դիր հոգեմասն բաժինն ընծայէ ի սուրբ Պաշն և ի Տէր Սաղոմոն» (Ստ. Որբ. եջ 218—220): Վերջապես՝ հինգերորդ վկայությունը վերաբերվում է «Տաթևոյ սուրբ ուխտ»-ի սահմաններին, վոր հատուկ վճռով և առանձին գրությամբ վորոշված են յեղել 906 թվին (Ստ. Որբ. եջ 230—234):

Ուրեմն՝ ինչպես տեսնում ենք, «խոստակդար» բառը հիշատակված է 839, 844, 867 և 906 թվականների Տաթևի վանքի փաստաթղթերում: Վոր «խոստակդար»-ի նշանակությունն այս վկայություններում վոչ թե «ժա-

¹ Introduction et tables des matières, St. Pétersbourg, 1858, էջ LXXXVII

ռանգ» և կամ «պաշտոնյա», ինչպես յենթադրել են Հյուբշմանը և Ռոսսեն, այլ «ավատառութ», այդ հաստատվում է, ինչպես ասացի, հենց նույն վկայությունների ուղադիր քննությունում: Վերոգրյալ վկայություններից յերկրորդում ասված է՝ «և չիլիսէ ոք հեռացնել» ոչ եղբայր և ոչ որդի և ոչ յիսխոստակդարաց», իսկ յերրորդում՝ «մի ոք իշխեսցէ յետ իմ անցման», իսկ որդիք կամ եղբարք կամ այլ խոստակդարք հեռացուցանել զայդ զիւղդ»:

Յեթե «խոստակդար»-ը հասկանանք առաջին հատվածում իբրև «ժառանգ»՝ կրտսացվի, իմ կարծիքով, ավելորդ կրկնություն, վորովհետև «Փիլիպպէ»-ի ամիջական ժառանգները, նրա վորդիները, հիշատակված են արդեն նույն հատվածի սկզբում: Նոր Հայկազյան բազմաթիվ մեկնությունը՝ «թոռունք կամ յեանորդք»՝ թեև հարմարվում է թե առաջին և թե յերկրորդ հատվածներին, սակայն այդ մեկնությունը, ինչպես վերև տեսանք, կարելի չի անտես առնել, վորովհետև «խոստակդար»-ի այդ նշանակությունը հիմնված է ստուգաբանական բունագրութիկ և սխալ բացատրության վրա: «Սոստակդար»-ի իմաստը վորոշելու համար ավելի կարեւոր են չորրորդ և հինգերորդ վկայությունները:

Չորրորդ վկայության մեջ, վոր գտնվում է Բուպրիդուխտի 867 թվի պայմանավճռում, ասված է՝ «Եւ մի ես և մի իմ եղբորորդիք եւ այլ խոստակդար պայքարել և համիմաղ կալ մի իշխեսցան»: Բուպրիդուխտը, ինչպես տեսանք, զավակ չունի, ուստի «խոստակդար»-ն այստեղ վաղ «թոռունք» կարող է նշանակել, վաղ ել անմիջական ժառանգ: «Սոստակդար»-ի իսկական իմաստը վորոշվում է այս հատվածում փաստական ու կարեւոր մի նոր ցուցման ոգնությունում, վոր ուղադրության չի առնվել: Վավերագրերի տակ, վոր քաղվածքներն առաջ են բերված Ստեփանոս Որբելյանի մոտ, սովորաբար, ստորագրել են կամ հիշվում են իբրև վկաներ հենց վերահիշյալ այն անձինք, վորոնցից պահանջվում էր չառարկել կամ չընդդիմանալ ավիրատուի կամքին: Բուպրիդուխտի փաստաթղթի վերջում ասված է.

«Եւ գրեցի յ 316 թուականութեանս Հայոց վկայութեամբ իմ եղբորորդեացս՝ տեառն Վասակայ և տեառն Աշոտի և տեառն Գրիգորոյ և տեառն Սահակայ և իւրեանց ազտտաց եւ ամենայն Շնհէրեցեաց» (Ստ. Որբ., եջ 220):

Վերև հիշված «եղբորորդիք և այլ խոստակդար», ինչպես տեսնում ենք, այստեղ մասնացույց են արված իբրև վկաներ, սակայն «խոստակդար»-ի փոխարեն ասված է՝ «վկայութեամբ իմ եղբորորդեաց և իւրեանց ազառաց և ամենայն Շնհէրեցեաց»: Այս զուգադրւումը, իմ կարծիքով, պատահական չէ. այլ պարզ մի ապացույց է, վոր չորրորդ վկայության մեջ «այլ խոստակդար» են անվանված Բուպրիդուխտի «եղբորորդի» ներկայացնելը, վորոնք «խոստակ»-առու եյին, այսինքն՝ ավատառու:

Վոր մատնանշված զուգադրւումը յեզակի ու բացառիկ չէ, այդ յերևում է և մյուս փաստաթղթերից, վորոնք Որբելյանի մոտ առաջ են բերված առանց կրճատման: Որինակ, «Փիլիպպէ»-ի 844 թվի վճռագրի սկզբում ասված եր՝ «և մի ոք իշխեսցէ յետ իմ անցման, իմ որդիք կամ եղ-

«Պոստակդար»-ի նշանակութեան այս նոր լուսարանութեամբ վորոշ-վուժ և Հայաստանի նախարարական կազմակերպութեան հիմնական առանձ-նահատկութիւններէց մեկը և վերջնականապէս պարզվում է, վոր «Ֆեոդա-ը և պայմանական հողատիրութիւնը նախարարական Հայաստանում գոյու-թիւն են ունեցել արդեն իններորդ դարում:

Նրա ծագումը սակայն, անշուշտ, ավելի հին է:

«Պոստակ»-ը, ինչպէս տեսանք, հանդիպում է նաև Աղվանից Վաչա-գան արքայի կանոններում: Մինչև այժմ յենթադրել են, վոր այդ կանոն-ներն ընդունված են յեղել «Աղուէն»-ի ժողովուս 488 թվին¹, իմ կարծի-քով, այդ ժողովը, հավանորեն, տեղի յեր ունեցել յոթերորդ դարի սկիզբ-ներում Վաչագան Բարեպաշտի ժամանակ, վորի իշխանութեան տարիները ևս, հետևաբար, յետ պետք է տարվեն վեցերորդ դարի վերջերը և յոթե-րորդի սկիզբները: Մովսես Կաղանկատվացու պատմութեան մեջ հիշատակ-ված է, վոր այդ ժողովին նախագահել է Միհրանական տոհմից Վարդան քաջ Գարդմանատերը, վորը ստորագրել է, իրոք, կանոնների տակ (տես Ա, Գլ. ԻԶ, էջ 103 և Գ, Գլ. Ժ, էջ 348): Իսկ այս Վարդանի ժամանակը դրո-վելու յե, անշուշտ, Միհրանական տոհմի հաստատման սկզբնական շրջա-նում՝ յոթերորդ դարի սկիզբներում:

«Պոստակ»-ի և «խոստակդար»-ների գոյութիւնը կարելի յե ըստ իս յենթադրել նաև VII—VI-րդ դարերից առաջ՝ թե Մարդպանութեան և թե Արշակունյաց թագավորութեան ժամանակ:

Վերև մենք արդեն տեսանք, վոր յեկեղեցականների պայմանական հողատիրութիւնը, վոր առաջ յեկած պիտի լիներ նախարարական աշխար-հիկ կարգերի ազդեցութեամբ, կարող է սկիզբ առած լինել չորրորդ դարում: Այդ արդեն ուշագրավ մի ակնարկ է, վոր պայմանական հողատիրութիւնը գոյութիւն ունեցած պիտի լիներ՝ իբրև մանր ազնվականութեան ավատա-կան հողատիրութիւն՝ նաև այդ հնագույն դարաշրջանում: Նույն այս յեն-թադրութեան հիմք կարող է ծառայել «խոստակ»-ի և «խոստակդար»-ի ստուգաբանական ծագումը պարթևերեն x'āstak և x'āstakdār բառերից: Այս տերմինները լինելով Արշակունյաց շրջանի փոխառութիւն, նրանց հնու-թիւնը կարող է դարձյալ հավանական մի ցուցանիշ համարվի, վոր նա-

¹ Տես Մ. Չամչյան, Պատմութիւն Հայոց, Բ, էջ 219. M. Brosset, Histoire de la Géorgie, Addition, St.-Petersbourg 1861, էջ 473. Fr. Tournel, Histoire politique et religieuse de l'Arménie, Paris 1900, էջ 357. Նաև իմ աշխատութեան մեջ՝ Beiträge zur albanischen Geschichte, Leipzig 1897, էջ 28:

² Վաչագան Բարեպաշտի ժամանակը վորոշելու համար կարևոր են Կաղանկատվացու պատմութեան հետևյալ ցուցումները. 1. Նրա Ա գրքի ԻԱ զիւում («Թուղթ արքային Վաչա-գանայ կն», էջ 76) կարգում ենք. «զաանէր և զամենատուրը նշխարս Գրիգորի... զոր էր բերեալ երիցուն՝ Մատթէ անուն, ի Յովհաննէ Հայոց կաթուղիկոսէ, զոր ունէր նորին մա-տանեաւն կնքեալ, և առաքեալ անգ երիցունս առնոր առ իւր»: Արդ՝ այս «Մատթէոս քա-հանայ»-ին, ինչպէս հայտնի յե «Գիրք թղթոց»-ից (Թիֆլիս 1901. էջ 79 և 83), ուղարկել եր Աղվանք Հայոց Նովհաննես Գաբրիէնացին (566/7—571, + 573): 2. Կաղանկատվացու Ա գրքի ԻԵ զիւում առաջ է բերված. «Արրահամ Մամիկոնէից եպիսկոպոս»-ի Թուղթը «առ Վաչական Աղուանից արքայ» (էջ 96): Այս Թուղթը, հավանորեն, պետք է վերագրել «Մա-միկոնէից Արրահամ եպիսկոպոս»-ին, վոր հետո 606/7 թվին գառավ կաթուղիկոս:

խարարական Հայաստանում feodl «խոստակ»-ը և feudataire «խոստակ-դար»-ը գոյութիւն են ունեցել մինչև միայն 9-րդ և 7-րդ դարերում, այլ, հավանորեն, նաև Մարզպանական և Արշակունյաց ժամանակներում:

Հենվելով վերոհիշյալ մեր դիտողութիւններին վրա և ամփոփելով մեր ասածները, կարող ենք անել հետևյալ հետևութիւնները.

1. «Սոստակ»-ը, լինելով կարևորագույն տերմին նախարարական կազմակերպութեան, իր իմաստով և իրավական բովանդակութեամբ համապատասխանում է միջնադարյան feodl-ին կամ Lehn-ին, իսկ «խոստակ-դար» նշանակում է «խոստակ-առու», այսինքն՝ feudataire կամ Lehnshalter.

2. Նախարարական Հայաստանի հիմնական առանձնահատկութիւններից մեկն այն է յեղել, վոր հայ յեկեղեցին, գտնվելով նախարարական միջավայրի ազդեցութեան տակ, յուրացրել էր նախարարական կազմակերպութեան պատրաստի ձևերը և մեծ չափերով յենթարկվել էր ֆեոդալականացման: Հետաքրքիր է այդ տեսակետից յեկեղեցական «խոստակ»-ների գոյութիւնը, վորոնք հատկացվել էին հոգևորականներին նրանց հոգևոր «ծառայութեան» համար ոգտատիրութեան իրավունքով (dominium utile), մինչդեռ նույն հոգարածիներին նկատմամբ գերագույն սեպհականութեան իրավունքը (dominium directum) պատկանել է յեկեղեցուն:

3. Ոգտատիրութեան այդ իրավունքը յեղել է ժառանգական, ուստի և հասկանալի յե, թե ինչո՞ւ Ներսեսի և Ներշապուհի հինգերորդ կանոնում այդ հոգարածիներն անլանվում են հայրենիք:

4. Հոգտտիրութեան այս ձևը, ինչպես յերևում է համապատասխան կանոնների քննութիւնից, յեղել է պայմանական, ուստի, յեթե հոգևորականների «ծառայութիւն»-ն անհնարին էր դառնում նրանց տգիտութեան կամ ծանր հանցավորութեան պատճառով՝ յեկեղեցին իրավունք ուներ «խոստակ»-ները յետ գրավել և տալ «արժանաւոր»-ներին:

5. Ինչպես յերևում է Ագաթանգեղոսի և Փավստոսի վկայութիւններից (տես «Դիտողութիւններ ին Հայաստանի շինականների դրութեան մասին», Պետհամալսարանի Տեղեկագիր № 1, էջ 13-17), 4-րդ դարում հոգևորականներին հատկացված են յեղել վորչ հոգարածիներ: Ավելի քան հավանական համարելով, վոր այդ հոգարածիները «խոստակ» էին և վնճ սեպհականութիւն, կարելի յի ըստ իս յեղրակացնել, վոր յեկեղեցական «խոստակ»-ների ծագման սկիզբը պետք է գնել 4-րդ դարի առաջին կիսում:

6. 9-10-րդ դարերի վավերագրերում, վոր մեջ են բերված Մտեփանոս Որբելյանի մոտ, «խոստակդար», այսինքն՝ «խոստակ»-առու՝ անվանված են իմ կարծիքով, այն «ազատ»-ները, վորոնք կալվածատեր «աւագ»-ներից ստացել էին «խոստակ»-ներ և ստանձնել էին իրանց «տէր»-երի հանդեպ զինվորական և այլ պատվավոր «ծառայութեան» պարտականութիւններ:

7. Ի նկատի ունենալով յեկեղեցական կազմակերպութեան նախարարականացումը և ընդունելով, վոր յեկեղեցական «խոստակ»-ները համադատասխան պիտի լինէին, հավանորեն, աշխարհիկ «խոստակ»-ներին, կա

րելի յե, իմ կարծիքով, յենթադրել, վոր «աղատ»-ների «խոստակ»-ները ևս համարվել են ժառանգական և «հայրենի».

8. Թեև «խոստակդար» տերմինն առաջին անգամ հիշատակվում է Ստեփանոս Որբելյանի մոտ 9-10-րդ դարերի վճռագրերում, սակայն, ի նկատի առնելով «խոստակ» և «խոստակդար» բառերի պարթևական ծագումը, նաև յեկեղեցական «խոստակ»-ների դոյությունը 4-րդ դարում, հավանական կլլինի յենթադրել, վոր ավատառությունը, իբրև հողային ֆեոդալական հարաբերությունների հատուկ կարգ, յեղել է նախարարական կազմակերպության հիմնական տարրերից մեկը վեչ միայն 9—10-րդ դարերում, այլ նաև ավելի հին շրջաններում Մարգարանության և Արշակունյաց թագավորության ժամանակ.

9. «Նոստակ» և «խոստակդար» տերմինների վերոհիշյալ լուսաբանությունը կարող է թերևս կովան ծառայել ճշտելու համար պարթ. x'āstak-dār բառի իմաստը. Հ. Հյուրշմանը մատնանիշ է արել, վորը x'āstakdār-ը Paud-nama i Adarbad Maraspand յերկում նշանակում է «ժառանգ» (der Erbe, Arm. Gram., էջ 161): Ճիշտ է արդյոք վորոշված այդ բառի իմաստը, Ինձ թվում է, վոր պարթևական այդ բառն իր նշանակությամբ կարող է համապատասխան լինել հայերեն «խոստակդար»-ին (Lehnsträger):

2. «Պետուդ», «օտարիաս» լիվ «սլախտ օանց»

«Պտուդ»-ը, պրոֆ. Նիկ. Ադոնցի կարծիքով, նույն հարկն է, ինչ վոր ևրոպական champart-ը, արաբական mukasame-ը և պարսկական bahrak-ը, այսինքն՝ բերքի վորոշ մասն է, վոր տրվում եր իբրև հարկ կալվածատիրոջ (Армения в эпоху Юстиниана, էջ 482-483):

Թադ. Ավղարեգյանը, համաձայն լինելով այս խնդրում Ադոնցի հետ, իր կողմից ավելացնում է, վոր «պտուդ» կամ «պտդի» հարկային տերմինը հոգևորական դասին անցել է աշխարհիկ տնտեսությունից՝

«Պտուդ»-ի նշանակությունը՝ իբրև բնական տուրք՝ պարզ յերևում է Ազվանից Վաչագան արքայի չորրորդ կանոնից.

«Պտուդը ի ժողովրդեն է երիցուն՝ կարգն այս լիցի. թուանիկն չորս գրիւ ցորեան, վեց գրիւ գարի և վեշտասան փաս քաղցու. և որ տառապեալն է՝ դհացիդ կէսն տացէ, և գինի՝ որչափ և կարողն իցէ. իսկ որոյ վար և այգի ոչ է, մի առցեն, իսկ այնք՝ որ աւելի քան զայս տացեն սակս հոգւոյ, բարի առնեն, որպէս Պօղոս ասէ, «Որ առաւուրեմամբ սերմանէ՝ առատութեամբ հնձեսցէ՝ և ոյր ոխչար է ի տան՝ ոխչար մի և երեք զղաթ բուրդ է մեկ պանիր». և ոյր ձիք ի տան իցեն՝ մին յովանակ. և ոյր պախրէք իցեն՝ որթ մի (տես Մովսեսի կազանկատուացւոյ, Պատմութիւն Աղուանից աշխարհի, Թիֆլիս 1913, Ա, գլ ԻԶ, էջ 99):

¹ Տե՛ս Թ. Ավղարեգյան, «Հաս, սակ, բաժ»։ Տեղեկագիր Հ. Յ. Ս. Հ. Գիտության և Արվեստի Ինստիտուտի, Յերևան 1926, էջ 89:

«Պտուղ» ի նշանակութունը թե այս և թե ուրիշ վկայություններում միանգամայն վորոշ ե ու անվիճելի։ Սակայն ուշադրության արժանի յե, վոր «պտուղ»-ը մատենագրական բոլոր վկայություններում գործ ե անվիճելի շատ յիկեզեցական տուրքի իմաստով, իբրև աշխարհական հարկ այս տերմինը, վորքան ինձ հայտնի յե, չե հիշատակված մեծ մատենագրական աղբյուրներում, մեծ ե արձանագրություններում։ Հնարավոր ե, իհարկե, վոր կալվածատիրոջ տրվող բնական հարկերը ես կարող եյին «պտուղ» անվանվել։ Բայց այդ հարկավոր ե, իմ կարծիքով, հաստատել վորոշ ու գրական վորեք վկայությամբ։ Վերոհիշյալ պնդումը կարող ե, ուրեմն, փաստական հիմնավորման։

Թե բնական և թե մյուս հարկերի խնդիրը քննելիս՝ պետք ե ի նկատի ունենալ, վոր միևնույն հարկերը զանազան դարաշրջաններում ունեցել են հաճախ տարբեր անուններ։ Հարկային տերմինների ուսումնասիրությունը, այդ տեսակետից, բավական բարդ աշխատանք ե։ Բացի տերմինների նշանակության լուսարանումից անհրաժեշտ ե, ուրեմն, վորոշել նաե նրանց կիրառման ժամանակաշրջանները։

Այս գիտողությունը վերաբերվում ե, բնականաբար, և բնահարկերին, վորոնք Բագրատունյաց, ինչպես և Սելջուկյան ու թաթարական տիրապետության շրջաններում, անվանվել են, ինչպես կը տեսնենք, մեծ թե «պտուղ» կամ «հաս»¹, այլ զշարիատ։

«Շարիատ»-ի մասին կարևոր տեղեկություններ գտնվում են վիմական արձանագրություններում և, բարեբախտաբար, այնքան շատ՝ վոր հնարավորություն են տալիս լավարար կերպով վորոշելու նրա նշանակությունը, իբրև բնահարկ։

Ի նկատի ունենալով խնդրի կարևորությունը, հարկ եմ համարում մեջ բերել արձանագրություններից «շարիատ»-ի վերաբերյալ բոլոր վկայությունները, վոր առայժմ ինձ հայտնի յեն։

1. Վիմական տարեգիր, կազմ. Կ. Կոստանյանցի, Ս. Պետերբուրգ 1913, էջ 8, Տեկոր, 971 թ.

«Ես Նաւսրեւանիւշ Հայոց թագուհի հաստատեալ եմ զՅեկուրոյ ցար. յեաճ յեղծ կայք մի».

2. Վիմական տարեգիր, էջ 13, Տեկոր, 1008 թ.

«Ի ՆՄԷ թ. Հայոց... կամ եղեւ ինձ Կատրանիդէ, Հայոց թագուհի, դուստր Վասակայ եւ ամուսին Գագկայ. թողեալ եմ զՅեկուրոյ ցար. յաճ վասն Գագկայ Շահնշահի արեւշատության եւ իմ որդեացն»։

3. Վիմական տարեգիր, էջ 14՝ Մաստարայ 1015 թ.

«Ի Նիդի թուականութեանս թորգոմեան ես Վահրամ իշխանաց իշխան, որդի Համգէի, թողի զՄասաւառայի ցարիաճ վասն Գագկայ Շահնշահի կենդ...»

¹ Տես իմ աշխատությունը՝ «Հայաստանի արքունի հարկերը մարդպանության շրջանում», Տեղեկագիր Գիտության և Արվեստի Ինստիտուտի, № 1, Յերևան 1926, էջ 9, 29—32 և 34—35.

4. Վիմական տարեգիր, եջ 26՝ Ալամն, *1001 թ.

«Այս իմ զիր է Սոփէ... Շահանշահի հայոց եւ վրաց թագունւոյ, թողել եմ զԱլաման օարյասս վասն իմ հոգւոս եւ արեւոս» են.

5. Վիմական տարեգիր, եջ 107՝ Փարպի, 1264 թ.

«Ես Աղբուղայ, որդի Իւանէի, որդւոյն մեծին Շահանշահի, ես Աղբուղայ թողի զՓարպոյ ալգեաց օարիասն. . չժգ».

6. Վիմական տարեգիր, եջ 126՝ Մրեն, 1284 թ.

«Թուակ. չլգ. այս մեր արձանագիր է պարոն Սէնոպ Սահմատինս Աւետեց որդւոյս եւ կենակից իմ Ուրտուրիայ որ յառաջ գնեցի զՄրեն յիմ հալալ արդեանց եւ հաստատեցաք արձանագրով ե թողաք զՄրենոյ օստեակն հացիք, որ ի օարիասն... կիկիչանայ ամիրու-թեամբս գրեցաւ».

7. Վիմական տարեգիր, եջ 126 եւ 162՝ Արուճ, 1285 թ. (նոս 1325 թ.)¹

«Ի թուիս հ. չլգ. ի փաթշահութեան Արդուն խանին, ի թագաւորութեան Դեմետրէի, պարոնութեան սպասաւար Մխարկրծե(ա)լին, եղբաւրն Իւանէի, որդւոյն մեծին Շահանշահի, ես Մակլի Խուսան աղայիս որդիս, եկի յԱրուճ իմ հաւրս գանձագին գեղս, եւ թողի հացիք օարիասն հաստից»...

8. Վիմական տարեգիր, եջ 127 Աւան, 1285 թ.

«Ես Դաւիթ, որդի Դեմէտրէ թագաւորին, թողի զԱւանայ զայգեաց օարէսն, վասն միամտութեան սոցա... Արդ որք ի մերոց կամ յաւտարաց տէր լինի Աւանայ եւ զհաստատեալ գիրս մեր խափանել քանայ եւ զօարէս առնու կամ»...

9. Վիմական տարեգիր, եջ 130՝ Օշական, 1288 թ.

«Ի թուին չլէ... յամի թագաւորութեան... Արդուն զանին ես պարոն Սահմատինս, որդի պարոն Աւետեացն, թողի զՅաւաւանո գեացի եւ զգարմանի օարիասն զվերի եւ զներքի զամէն եանգի»...

10. Վիմական տարեգիր, եջ 130՝ Մրեն, 1288 թ.

«Թւ. հ. չլէ... ես պարոն Սէնոպ Սահմաղինս եւ ամուսին իմ Ուտուրտա... Մրենոյ հացիք օարիասն թողել էաք եւ հայմալ թողաք զէգեց դինոյ ե խաղողի խալէն»...

11. Վիմական տարեգիր, եջ 138՝ Հոփսիմէի վանք, 1296 թ.

«Ի թվիս չլս. ի պատրոնութեան իշխանաց իշխանին մեծին Շահանշահի եւ Աղբուղին և Շիրին խաթունս ու Պայալուն խաթունս ու Թաւղթէս ու Թալէս ու Խոճէս ու Ղայիրս թողաք զՀոփսիմուցս զբաբակիք օարիասն եւ զշահնաին բարակի հակն»...

¹ Միենույն այս արձանագրութիւնը տպւած է յերկու անգամ 1285 եւ 1325 թվականներին տակ (եջ 126 եւ 162): Միայն բացատրում է նրանով, վոր հայոց թվականը Շահաթունյանի մոտ («Ստորագրութիւն կաթողիկէ շքմիածնի եւ հինգ զաւառացն Արարատայ», իջմիածին 1842, Բ, հջ 61) կարգացված է չլգ (=1285), իսկ Ալիշանի մոտ («Այբարատ», Վենետիկ 1890, եջ 144)՝ չհգ (=1325): Ուղիղ է, անշուշտ, Շահաթունյանի թվականը, վորովհետեւ Արդունն «էլղան» եր 1284-1291 թվերին: Մեր բնագրում Շահաթունյանի սխալ ընթերցմաներն ուղղված են Ալիշանի բնագրի համաձայն:

12 Վիմական տարեգիր, հջ 142՝ Յովհաննավանք, 1201 թ.

«Ես Ամասջան, որդի Գրիգորին, եւ ամուսին իմ Բեռնա. հէնց էլաւ պարոնաց ձեռնէ գերկիրս առին եւ չրաժնեցայ ի ծառայութենէ. աստուած պարոնաց աջողութիւնս երեստ, երկիրս երեկ. Ոհաննավանք ինձ տվին հէրէնիք. հասարակաց տունս խլած էր էգոց հողի ԵԱՐԱՐԱՐ ՀՐ զրած. մեք էլ հասարակ ի սուրբ Կարապետս ապսպարեցաք, վանաց էգոյ ԵԱՐԻՄԱՅ վեր կալաք»...

13. Վիմական տարեգիր, հջ 247՝ Շիրակաւան, անթվական.

«որ ով եկեղեցոյս զրանս կա եւ ապաստաւորէ սմա թէ տրեղա եթէ միակեց, թէ շատ տաւար ունենաւ եթէ քիչ, թէ շատ վաստակ ցանեն եւ թէ քիչ. ոչ ԵԱՐԻՄԱՅ, ոչ համարեմէ, ոչ սուսունի, ոչ եղին թաղար, ոչ մեծ չար, ոչ վոքըր հետ եկեղեցոյս սպասաւորացս ոչ ում խաւսք չիւնի»¹...

Այս վկայութիւններում, ինչպես ասելու է մենք, հիշատակված են.

ա. «գՏեկորոյ շարյեւտն յեղն կայթ² մի» (վկ. 1),

բ. «գՓարպոյ այգեաց շարիատն» (վկ. 5),

գ. «գՄրենոյ աասնակն հացին, որ ի շարիատն» (վկ. 6),

դ. «Արուճի հացին շարիատն» (վկ. 7),

ե. «գԱւանայ գայգեաց շարէտն» (վկ. 8),

զ. «գՅաւշականո գհացի եւ զղարմանի զշարիատն գվերի եւ գնեքքի գամէն հանդի» (վկ. 9),

է. «Մրենոյ հացին շարիատն» (վկ. 10),

ը. «գՀռիփսիսուցս զրա(մ)րակին շարիատն» (վկ. 11) եւ

թ. «Ոհաննավանքի էգոց հողի շարատ» (վկ. 12):

«Շարիատ» անունը ելին, ուրեմն՝ յիդից, այգիներից, հացից, դարմանից, բամբակից: Վեցերորդ վկայութեան մեջ՝ «շարիատ» եւ անվանված հացի «տասնակ»-ը, առաջին վկայութեան մեջ՝ Տեկորից ստացվող մի կայթ յուղը, իսկ մյուս դեպքերում՝ թեեւ չի նշանակված «շարիատ»-ի քանակը, սակայն կարելի յե վստահորեն յենթադրել, վոր «շարիատ», ը դարձյալ բերքի վորոշ մասն եւ, վոր վճարվում եր վորպես հարկ: Այդ բնահարկը, ինչպես պարզ յերեւում ե վկայութեաների բովանդակութիւնից, վճարվել ե կալվածատերերին:

«Շարիատ» բառի ստուգաբանութիւնը ե նրա նշանակութիւնը վորոշել են լուսարանել պրոֆ. Նիկ. Մառը ե պրոֆ. Ս. Յեղիաղարյանը:

¹ Բացի վերոհիշյալ արձանագրութիւններից տեւ նաեւ 1323 թվի Սիթի խաթունի արձանագրութիւնը (Վիմ. տար. հջ 161), վոր չափազանց ազնաւորած ե:

² «Կայթ»-ը՝ իրեն հացահատիկների չափ՝ համասար ե յեղել Շիրակացու ժամանակ, ինչպես ցույց ե տվել Գալուստ Տեր-Մկրտչյանը, 60 լիտրի ուրեմն՝ նրա կշիռը կըլինէր $320,4 \times 60 = 19,584$ կիլոգրամ: Տեւ Գալուստ Տեր-Մկրտչյան, «Անանիտ Շիրակացի», Վաղարշապատ 1896, հջ 19. Դմտեւ նաեւ Ս. Ա. Օրբելի, Вопросы и решения нардапета Анании Ширакца, Петроград 1918, հջ 64. Լիտրի կշիռը տեւ իմ աշխատութեան մեջ՝ «Նյութեր հին Հայաստանի տնտեսական կյանքի պատմութեան» (1). Տեղեկագիր Գիտութեան ե Արվեստի Ինստիտուտի, Յերեւան 1927, № 2:

Նիկ. Մառի ասելով՝ մինչև թաթարական տիրապետությունը Հայաստանում հարկատվության նկատմամբ տեղական սովորույթների հետ միասին իշխել է մահմեդական իրավունքը, ուստի և «շարիատ» և անվանվել այն հարկը, վոր պահանջվել է համաձայն այդ իրավունքի՝ այսինքն՝

شهریه¹

Ս. Յեղիազարյանը, վորը նույնպես «շարիատ»-ը մեկնել է իրրև «НАЛОГ ПО ШАРИАТУ»², փորձել է նաև վորոշել այս հարկի բովանդակությունը, Հիմնվելով 1284 թվի Մրենի արձանագրության վրա (տե՛ս վերև վկայութ. 6), նա յենթադրել է, վոր «շարիատ»-ը մահմեդական որևէքով սահմանված «տասանորդ»-ն է³, «Շարիատ»-ին, վոր մահմեդական հիմնական հարկ էր, յենթակայ էյին,—ասում է Յեղիազարյանը,— տնտեսության բոլոր ճյուղերն իրանց արդյունքներով, ամեն տեսակ գույք, արհեստներ և առևտուր. վավերագրերի մեջ առաջ են բերված, իրոք, դեպքեր, յերր «շարիատ»-ի տակ են դրվել՝ մարդը, հացը, կաթը, յեղը, անասունները և այլն⁴։

Հարգելի ուսուցչապետի այս վերջին յեզրակացությունը, անտարակույս, սխալ է։ Արձանագրական վկայություններում, ինչպես տեսանք, վո՛չ մի խոսք, անգամ ակնարկ չկա այն մասին, վոր իրր «շարիատ»-ի տակ էյին՝ «ամեն տեսակ գույք, արհեստներ, առևտուր մարդ կամ անասուններ»։

Ուշադրության արժանի յին սակայն «շարիատ»-ի մասին վերոհիշյալ ստուգաբանական մեկնությունը⁵, նաև նրա քանակական վորոշումը իրրև «տասանորդ»։

Ստուգաբանական մեկնությունը, թեև առաջին հայացքից թվում է հնարավոր, սակայն միանգամայն անընդունելի պիտի համարվի՝ վո՛չ միայն «շարիատ»-ի և شهریه իմաստների տարբերության, այլ, գլխավորապես, նաև այն պարզ պատճառով, վոր «շարիատ»-ը վործ է ածված Հին կտակարանի գրաբար թարգմանության մեջ, յերր դեռևս գոյություն չունեյին վո՛չ Մահմետը, վո՛չ էլ մահմեդական որևէքները։

Նոր Հայկաշյան բառգիրքը, վոր նկատի յե ունեցել հենց այս վկայությունները, «շարիատ»-ը մեկնել է իրրև— *επλεοναξία*, *abundantia*, բա-

¹ Н. Марр, Новые материалы по армянской эпиграфике, С.-Пет. 1893, № 80. Зап. Вост. отд., том VIII.

² Проф. С. А. Егиазаров, Исследования по истории армянского права, Киев 1919, № 4.

³ Նույնը, № 40.

⁴ Նույնը, № 40.

⁵ Հ. Ղևոնդ Ալիշանը «շարիատ»-ը համարել է՝ «հասարակ կոչումն տրից», և նրա ստուգաբանական ծագման մասին մատնացույց է արել, վոր «շարիատ» բառ պարսից նշանակել խորշ պարկի, ամս «Շիրակ», Վենետիկ 1831, № 92։ Այս թուղթի համեմատությունը, իհարկե, ճշգրիտ չէ՝ թև այդ բառերի տարբեր նշանակության և թե ձայնական որևէքների անհամաձայնության պատճառով։

ոերը իբրը յաւելուած, այսինքն՝ վաշխ յաւելեալ ի վերայ փոխոյ քան զզուլի դրամոյն և այլոց ընչից»:

Ավելորդ չիմ համարում մեջ լերել Հին կուսակարանի կարեոր այդ վկայութիւնները:

1. Դևտ. ԻԵ. 37.

«Ջարձաթ քո մի տապալան մա ընդ տոկոսեօք, և զկերակուր քո մի տապալան մա ընդ շարիատիւ»:

2. Բ. Օրէնք. ԻԳ. 19.

«Մի տապալան կորոր քում արձաթ վաշխիւ, և մի զկերակուր շարիատիւ»...

«Շարիատ»-ի հանդիպ հունարեն թարգմանութիւնն ունի սոաջին հատվածում՝ πλεονεξία, իսկ յերկրորդում՝ τήρησι, այսինքն՝ «յաւելուած» և «տոկոս»:

«Շարիատ», ինչպէս տեսնում ենք, անվանվել և հինգերորդ դարում այն տոկոսը, վոր վճարվում եր իբրի յավելում փոխ առած ուտելիքների կամ կենսամթերքների համար: Իբրեւ ընհարկ նա նույնպէս նշանակում եր, ինչպէս տեսանք, վորոշ տոկոս, վոր ստացվում եր լերքից: Շատ պարզ և, ուրեմն, վոր «շարիատ»-ը նահարկը նույն բառն և, ինչ վոր հինգերորդ դարի «շարիատ»-տոկոսը, և, հետեալար, նա չի կարող լինել մահմետական շրջանի փոխառութիւն:

Մնում և պարզել մի խնդիր ես, թի արդյոք ճիշտ և, վոր «շարիատ»-ը վորպէս բնահարկ ունեցել և բացառապէս «տասանորդ»-ի իմաստ:

Պրոֆ. Ս. Յեղիազարյանը, ընդունելով վոր այդ հարկը մահմետական «տասանորդ» ն և կամ «աշար»-ը, ինչպէս, տեսանք, մատնացույց և արել վերահիշյալ վեցերորդ վկայութիւնը՝ «Մրենոյ տասնակն հացին, որ ի շարիատն» իմ կարծիքով, այս յենթադրութիւնը ևս հավանական չի:

Յեթե Մրենում «շարիատ»-ը տասանորդ եր, այդ չի կարող, ընակաւնաբար, ապացույց լինել, վոր նույն նշանակութիւնն ունեցել և նաեւ մյուս վկայութիւններում: «Շարիատ»-ը, վորի բուն իմաստը տոկոս եր, բերքի վորոշ մասն եր, վորի քանակը տարրիւր վկայութիւններում, վոր վերաբերվում են զանազան դարաշրջանների, կարող եր նույնը չլինել: Նրա քանակական վորոշումն առանձին զիպքերում խիստ կարեոր մի խնդիր և, սակայն այդ խնդրի լուսաբանութեան համար հարկավոր են, անշուշտ, փաստական նոր տվյալներ:

Բացի 1284 թվի Մրենի արձանագրութիւնից (վկայութ. 6), «շարիատ»-ի չափը տրված և նաեւ Տեկորի 971 թվի արձանագրութեան մեջ (տես վերև վկայութ. 1), «ես Սաւրեանիւ չափոյ թաղուհի,—ասված և այդ վկայութեան մեջ,—հաստատեալ և՛ զՏեկորոյ շարքեաւն յեղն կայթ մի»: Նույն այս հարկը հիւատակված և նաեւ Մխիթար Գոշի Դատաստանագրքում՝ «կովու լիտր եղն միայն լիցի» (Վաղարշապատ, 1880, Բ, ա, եջ 315):

Հնադույն հարկերի քանակը վորոշող թի այս և թի նման վկայութիւններն այնքան կարեոր են տնտեսադիտական հետազա ուսումնասիրութիւնների համար, վոր յիս ավելորդ չիմ համարում մի վտքը կանգ

առնել չափերի վրա, վոր մատնանշված են այս հատվածներում: «Շարիատ»-ի չափը, ինչպես տեսնում ենք, ցույց է տրված Տեկոր գյուղից ընդամենը՝ «կայթ մի», իսկ Դոշի վկայություն մեջ՝ յուրաքանչյուր կովից մեկ լիտր:

Յեթն վիժական տարեգրի «կայթ մի» ընթերցվածը ճիշտ համարենք՝ և տասերորդ դարի այս «կայթ»-ը հավասար ընդունենք Շիրակացու ժամանակվա «կայթ»-ին, վոր 60 բյուզանդական լիտր էր, Տեկորի յուղի ընհանրվել այժմյան կշռով, ինչպես ասացի, կլինի 19,584 կիլոգրամ:

Այս հաշիվն ասում ենք սակայն վերապահությամբ, վորովհետև կշիռն հրել կարող էին նույնը չլինել զանազան դարաշրջաններում և տարրեր տեղիներում:

Մխիթար Դոշի մոտ վերահիշյալ լիտրը, որինակ, այլևս Շիրակացու հիշած բյուզանդական «լիտր»-ը չէ ($= 326,4$ գրամ), այլ, ըստ հրեւյթին, արարական ժամանակվա Իրակի լիտրն է, վորի կշիռը հավասար էր 408 գրամի կամ 1 ուսական ֆունտին: Այս հետևությունը ստացվում է Դատաստանագրքի Վինետիկի որինտիկի լուսանցքի նկատողությունից և ձեռագրական այն ընթերցվածներից, վոր մանրամասն առաջ են բերված Բատամյանցի ծանոթություն մեջ, «Մի որինտիկի մէջ, — ասում է Բատամյանցը, — լուսանցքի վերայ դրած է օտարի ձեռքով իրեն բաւարութիւն լիտր բառի՝ «ճ» (100) գրամ կեփո եղ», որով կամենում է իրր ասել թէ մի լիտրը հաւասար է հարիւր գրամ կշռին:— Վինետիկի օրինակի մէջ դրած է «լըբեղն» (անշուշտ՝ «լըբե եղն»): իսկ այդ բառի տակ կցած է լուսանցքի վերայ այսպիսի ծանոթութիւն՝ Այսպէս ի հնազոյն. ի մի օրին. «լիտր իւղն»: Երբիս խանդարեալ օրինակսն՝ «կովու հարիւր գրամ կեփո իւղ օսցեն»: Սոյնպէս դրած է և № 488, 749 Սին. Կարապ. օրին. մէջ՝ «և կովու ճ. (100) գրամ կշիռ եղ տացեն»²:

Այս կարևոր ընթերցվածները զտնվում են Դատաստանագրքի ձեռագիր հին որինակներում, ուստի հավանական պիտի համարել, վոր Մխիթար Դոշի մոտ հիշատակված «լիտր»-ի կշիռը յեղել է, իրոք, «ճ գրամ», Բյուզանդական «լիտր»-ի կշիռը ($= 326,4$ գրամ), ինչպես գիտենք, հավասար էր 80 «դրամ»-ի («դրամ»-ը $= 4,08$ գրամ), սակայն Իրակի «լիտր»-ը, վոր դործ է անվել արաբական աշխարհակալության ժամանակ գրեթե ամեն տեղ՝ անգամ Սպանիայում, Ֆրանսիայում և Ռուսաստանում՝ այժմյան կշռով 408 գրամ էր, և հենց այս «լիտր»-ը, իմ կարծիքով, համապատասխանում է Դատաստանագրքում մատնանշված «լիտր»-ին, վորի կշիռը, ինչպես տեսանք, հավանորեն, 100 «դրամ» էր³:

¹ Արձանագրութիւնների տպագիր հրատարակութիւններն այնքան անփութ են ուսխալաշատ, վոր «կայթ մի» ընթերցվածը կարող է լինել աղճատված: Արձանագրութիւնն մեջ ուղիղ ընթերցվածը թերևս լինի՝ «կայթ» ինչ:

² Տես Մխիթարայ Գօշի, Դատաստանագիրքը Հայոց, Բ, ա, էջ 315 ծանոթ. 678:

³ Կշիռների և չափերի ուսումնասիրութիւնը, պետք է ասել, վոր խիստ բարդ ու դժվար խնդիր է, վորին պետք է մոտենալ առանձին զգուշութամբ: Վնչ միայն հին, այլ նաև դիտական նորագույն աշխատութիւններում կշիռների, չափերի և դրամների վերա-

Յեթն ընդունելի համարվի իմ այս յենթադրությունը, յուզից վճարվող ընահարկը կամ «շարխատ»-ը, վոր Գոշի Դատասանազրքում սահմանված եր յուրաքանչյուր կովից մեկ լիտր, այժմյան կշռով պետք ե հաշվել 408 գրամ կամ ուսական 1 ֆունտ:

Բացի «շարխատ»-ից, վորի ընահարկ լինելը հաստատում են վերոհիշյալ վկայությունները, բնական հարկի նշանակություն ունեցել ե, ըստ յերևույթին, նաև «պախտ» հարկը, վորը հանդիպում ե միանգամ միայն Վիսական տարեգրում՝ Անիի 1046—1050 թվի՝ հետևյալ արձանագրության մեջ.

Վիսական տարեգիր, եջ 27՝ Անի, *1045—1054 թ.¹

«Ես Առաւնս մագիստրոս, մեծարեալ ի մեծափառ Թագաւորութեանց ի գեղ զարդու եւ ի տես մանդութեան իմո, եկի յարեւելս, ի գեղեկաշէն բերդս, յԱնի, բարձրացուցի բաւանգակ զպարիսպ սորին կառկառակոյտ արձանաւք եւ հաստահեղոյս ամրութեամբ, եւ ի յիմոց մեծածախ գանձուց ածի ջանիւ ջուր յորգարուիս ի մէջ ամրոցիս յուրախութիւն եւ ի զովացումն ծարաւեաց: Բերի ոսկի մատանեաւ գիր ազատութեան դինքնակալ ծիրանեծին Թագուհոյն Վասն պախտից ճաճց քաղաքիս եւ քասակից, զոր ճայից ամյամէ չափ ութից լտերց, այլ եւ ի խնդրո իշխանաւորացս խափանեցի եւ զգիւս երկուց լտերց, զոր տայր մութսիրն այս ամէնս:

Թեև այս վկայության մեջ չե հիշված, թե ինչն եր տրվում «չափ ութից լտերց» և «երկուց լտերց», սակայն միանգամայն պարզ և վորոշ ե, վոր «պախտ տանց»-ը բնական հարկ եր, ինչպես և «թաստակ»-ը, վորի մասին խոսելու յենք առանձին:

«Պախտ»-ը, իմ կարծիքով, հոմանիշ ե այստեղ «շարխատ»-ի և, հավանորեն, նույն հարկի պարսկական անունն ե՝ Խնչպես հայտնի յի, հա-

բերմամբ հանդիպում են հաճախ միանգամայն սխալ ցուցումներ, վոր կարող են հիմք ծառայել սխալ ու խառնափոխ հայեցողիքի Որինակ. Ն. Ռոմկովի «История России» աշխատության մեջ (Петроград 1919, т. I, էջ 156) բյուզանդական «լիտր»-ը կամ ֆունտը հավասար ե ընդունվում ուսական այժմյան 3/4 ֆունտի: Բյուզանդական «լիտր»-ի կշիռը, ինչպես ցույց ե տրված իմ մի այլ աշխատության մեջ («Երկու թեր հին Հայաստանի տնտեսական կյանքի պատմության», I, Տեղեկագիր Գիւ. և Արվ. Ինստիտուտի № 2) 326,4 գրամ եր, իսկ ուսական ֆունտի՝ 408 գրամ, ուստի նա հավասար ե վոչ թե 3/4 ուս. ֆունտի, այլ 4/5:

¹ Բյուզանդական իշխանությունը հաստատվել եր Անիում 1046 թվին: Ջոյե կայսրուհին, վոր հիշվում ե սույն արձանագրության մեջ, վախճանվել ե 1050 թվին: Արձանագրությունը գրված ե, հավանորեն, վոչ թե 1045—1054 թվականների ժամանակամիջոցում, այլ 1046—1050 թ.:

² Պրոֆ. Ս. Յեղիազարյանն այս հարկը նույնն ե համարում, ինչ վոր «դանադիր»-ը, և «պախտ տանց»-ը Թարգմանում ե подомный налог: «Այս հարկը,—ասում ե նա,—գոյություն ունեցել Անդրկովկասի մահմետական շրջաններում оvrnuli (подомные деньги) կամ thuxirihuli (подымные деньги) անունով(տես Исследование, էջ 39): Իմ կարծիքով, «դանադիր» և «պախտ տանց»-ը տարբեր հարկեր են: Բացի այդ՝ արձանագրության բովանդակությունից պարզ յերևում ե, վոր «պախտ»-ը տարբեր ե նաև հիշյալ մահմետական հարկերից, վորովհետև այս հարկը տրվել ե վոչ թե զրամով, այլ լիտրերով:

յերեն «բախտ» բառը, վորը փոխառություն է պարթևերենից, հնդգահարանական լեզուներում նշանակում էր վոչ միայն «բախտ, վիճակ, ճակատագիր», այլ և «մաս, բաժին»¹։ Ճիշտ այնպես, ինչպես և ռուսական ДОЛЯ բառը, վորի սկզբնական իմաստը «մաս, բաժին» է, փոխաբերաբար նշանակում է նաև «բախտ, ճակատագիր»։

Ինչ թվում է, վոր այս «պախտ»-բնահարկը պարթևերեն կամ պարսկերեն վերոհիշյալ նույն օճեցուն է, վորը կարող էր բացի իր սովորական նշանակություններից ունեցած լինել նաև բերքից վճարվող մասի կամ բնահարկի նշանակություն։

Յ. «Թասուակ» = քասու-ակ.

1046—1050 թվի Անիի արձանագրությունը, վորի մեջ հիշատակված է «պախտ տանց» հարկը, ուշագրավ մի նեցուկ է ու կովան, վորը, իմ կարծիքով, հիմք կարող է ծառայել «թաստակ» հարկի լուսարանության համար։

Այս վերջին հարկը հիշված է հինգ անգամ XI-րդ դարի հետևյալ արձանագրություններում.

1. Վիմական տարեգիր, էջ 13, Տեկոր 1014 թ.

«Եւ ես Աշոտ թագաւոր հաստատեցի եւ թողեալ եմ դհարկն (այսինքն՝ «զգարիատն») բնովիմբ յաւիտենից եւ զքասակն վասն իմ արեւշատութեան եւ իմ ծնողաց եւ եղբարց եւ զաւակաց, որ աւր թ. կ. Հաոց նկզ էր»...

2. Վիմական տարեգիր, էջ 14՝ Հոռոմոս, 1013 թ.

«Եւս Անանիա, առաջնորդ գուրվ ս. ուխտիս... զատեցի մեծաւ ջանիւ զհարկ եւ զքասակ, առի և գ՛րեղարագոմն իւր ամենայն ղոյիւ ի. ս. ուխտս վասն ապաւինի տեղի լինելոյ ի փախտեան ժամանակի եւ այլ բազում ինչ աւգտի փայտի եւ խոտի... տուող այդմ պարգեւի Գագիկ էր... եւ որդեակք իւր՝ Սմպատ եւ Արաս եւ Աշոտ։

3. Վիմական տարեգիր, էջ 21՝ Երեբուք, 1038 թ.

«Յանուն Աստուծոյ ի թուականին նձէ. (բ)արեպաշտ թագուիս ղուսաւրբ Արասա, Սմբատ Շահնշահի կինս, եւ Աշոտո մա(յ)րս, որ աղատեցի զԵրէրվաց քասակաս յորդէց յորդիս Սմբատ Շահնշահանի հզուրի եւ արքաի արեւշատութեան»...

4. Վիմական տարեգիր, էջ 27՝ Անի, 1046—1050 թ.

«Եւս Առաւնս... բերի ոսկի մատանեաւ զիր ազատութեան զինքնակալ ծիրանեծին թագուհոյն վասն պախտից տանց քաղաքիս եւ քասակից, ղոր տային ամ յամէ Հափ ութից լաւրց. այլ և ի խնդրո իշխանաւորացս խափանեցի եւ զգիւտ երկուց լտերց, ղոր տայր մութսիւրն այս ամէն»²։

¹ Տե՛ս Հ. Աճառյան, Հայերեն արժատական բառարան, Երևան 1926, էջ 906.

² Կա մի վկայություն եւ թաստակի մասին Աւանի 1041 թվի արձանագրության մեջ. տե՛ս Н. Марр, Новые Материалы по армянской эпиграфике, էջ 76.

Պրոֆ. Ս. Յեղիազարյանը, կարծում է, վոր «Թաստակն» իրանական ծագում ունի և համեմատում է այս բառը *dāstāk*-ի հետ¹, «Թուրքերի մոտ, —ասում է նա,—մի սովորություն կա, վորի համաձայն նախընտրված ունի տնտեսական տարվա վերջին, յերբ լրանում է տարեկան իր վարձույթի ժամանակը, վերցնելու իրեն պարդե մեկ վոչխար կամ մեկ զառ իր ընտրությունը: Այդ վոչխարը կամ գառը, վոր նրա աշխատավարձի մեջ է մտնում, այլ տրվում է նրան իրեն պարդե, անվանվում է *dāstāk*, «Թաստակ»-ը, վոր հիշվում է վավերագրերում, կարող է թերևս հատուկ տուրք լինել հարկահավաքի ոգտին»²:

«Թաստակ»-ի այս սահմանադրությունը թե հնչյունական տեսակետից և թե իմաստի տարբերության պատճառով միանգամայն անընդունելի չէ, սակայն պրոֆ. Յեղիազարյանի յենթադրությունը, ավելի ճիշտ գուշակությունը, վոր «Թաստակ»-ը կարող է լինել լրացուցիչ տուրք հոգուտ հարկահան պաշտոնյաների, իմ կարծիքով, անհավանական չէ:

Նույն յեղրակացության հանդեպ եմ է յես, բայց վաղ վերահիշյալ բացատրության հիման վրա, վոր համարում եմ սխալ, այլ փաստական ուրիշ ցուցումների ուղևությունը, վոր բղխում են արձանագրական վկայություններից: Վկայություններում, նախ և առաջ, աչքի յե ընկնում, վոր «Թաստակ»-ը հիշվում է «շարխատ» կամ «պախտ տանց» բնահարկի հետ միասին:

1008 թվին կատարանիդե թաղուհին, ինչպես տեսանք, աղատել եր Տեկորը «շարխատ» հարկից, իսկ 1014 թվին Աշոտ թագավորը հաստատում է այդ և իր կողմից աղատում նույն Տեկորը նաև «Թաստակ»-ից (վկայութ. 1): Հոռոմոսի առաջնորդ Անանիան 1013 թվին աղատել է «մեծաւ ջանիւ գհարկ և զթաստակ» (վկայութ. 2): 1046—1050 թվականների ժամանակամիջոցում «Առաւն» մագիստրոսը բերել է «զիր աղատութեան... վասն պախտից տանց քաղաքիս եւ թաստակին» (վկայութ. 4):

Այս վկայություններից ստացվում է այն տպավորությունը, վոր «շարխատ»-ը, վորը Հոռոմոսի արձանագրության մեջ անվանված է «հարկ», իսկ Անիի արձանագրության մեջ՝ «պախտ տանց», ինչ վոր կապ է ունեցել «Թաստակի» հետ: Ինքն ըստ ինքյան այս դիտողությունը կարող է անհիմն կամ քմահաճ թվալ, սակայն նույն յենթադրության կոպան է հանդիսանում մի նոր հանգամանք, վոր արժանի յե առանձին ուշադրության:

Անիի 1046—1050 թվի արձանագրության մեջ վաղ միայն միասին են հիշված «պախտ տանց» բնահարկը և «Թաստակ»-ը, այլ մատնանշված է

¹ Ս. Յեղիազարյանից առաջ հայերեն «Թաստակ»-ի ծագումը պարսկերեն *dāstāk*-ից վորով վերապահությամբ մատնանշել է Նիկ. Մառը: «Если название повинности *թաստակ*, —ասում է նա,—обязано своим происхождением той статье закона или специальной грамоте, в силу которой требовалась ея уплата, то его можно сблизить с персидским словом *دستگاه* *literae nigillae munitionum praefecti scriptae* (Vullers, Lex. Pers. Lat.) տես Новые материалы по армянской эпиграфике, С. Пет. 1893, էջ 80.

² Исследование по истории армянского права, էջ 4 և 42:

նաև հարկերի քանակը՝ Առաջին քանակը՝ «չափ ուտից լտերց»՝ վերաբերվում է, անշուշտ, քաղաքի ամեն մի տնից տրվող հիմնական հարկին, իսկ յերկրորդը՝ «գիւտ երկուց լտերց», ամենայն հավանականությամբ, լրացուցիչ «թաստակ» հարկն է, վորը, ինչպես տեսնում ենք, կազմում է առաջին հարկի $\frac{1}{4}$ մասը:

Անուշադիր չպետք է թողնել, վոր այս վերջին քանակը՝ հիմնական հարկի $\frac{1}{4}$ -ը՝ արձանագրության մեջ անվանված է «գիւտ երկուց լտերց», այսինքն՝ «չահ» կամ «վաստակ»: Վերջապես՝ ուշագրավ է ու հետաքրքիր, վոր «Առան, մագիստրոսը խափանել» է այդ «գիւտ»-ը կամ «վաստակ»-ը «ի խնդրո իշխանաւորաց»: Ըստ յերևութիւն, «ծիրանեծին թագուհոյ»՝ ազատութեան զրա-ից դուրս այդ «գիւտ»-ը խափանելու համար հարկավոր է յեղել նաև քաղաքի իշխանավորների համաձայնությունը:

Արդ՝ այս բոլոր դիտողություններից, կարծում եմ, կարելի յ է հետեցնել, վոր «թաստակ»-ը լրացուցիչ տուրք եր՝ $\frac{1}{4}$ -ը հիմնական բնահարկի, վոր ստանում էին, հավանորեն, «մուխսիբ»-ը կամ թերևս նաև ազնիւ բարձր կանգնած իշխանավորները:

Այս «մուխսիբ»-ը, վոր Անիի անթվական մի արձանագրության մեջ անվանված է «մուսայիպ», իսկ Սմբատի Դատաստանագրքում՝ «մուխթասիպ»², արաբական muhtasib-ն է, վորը, ինչպես հայտնի յ է, արաբական տիրապետության ժամանակ քաղաքներում վարում եր վոստիկանապետի պաշտոն և հսկում եր շուկայի, կշիռների ու չափերի վրա: Ինչպես տեսնում ենք Անիում նրան հանձնված է յեղել նաև բնական հարկերի հավաքումը:

Դյուղական շրջաններում վարչական ու հարկահավաքման գործը վարել են, ինչպես յերևում է արձանագրական վկայություններից, «ձեռնաւոր»-ները³: Յեթն վերահիշյալ կռահումը ճիշտ լինի, վոր «թաստակ»-ը 1046—1050 թվի Անիի արձանագրության մեջ լրացուցիչ տուրք է, վոր ստանում եր «մուխթասիպ»-ը, այդ դեպքում՝ Տեկորի 1014 թվի, Հոռոմոսի 1013 թվի և Յերերուքի 1038 թվի արձանագրություններում նույն «թաստակ»-ը պետք է ընդունենք դարձյալ լրացուցիչ տուրք, վոր տրվել է գյուղական շրջաններում «ձեռնաւոր»-ներին:

Վոր «ձեռնաւոր»-ների հատուկ հարկ, իրոք, գոյություն ունեցել է՝ այդ, իմ կարծիքով, կարելի յ է յեղրականցնել XIII-րդ դարի հետևյալ վկայություններից.

1. Վիմական տարեգիր, էջ 51՝ Հաղբատ, 1210 թ.

¹ Տես Վիմական տարեգիր, էջ 221.

² Տես J. Karst, Sempadscher Kodex, Strassburg 1006, Bd. I, չժԲ, էջ 162 և Bd. II, էջ 233.

³ Տես Վիմական տարեգրում հետևյալ արձանագրությունները՝ Հաղբատի 1210 թվի (էջ 51), Երրակավանի 1228 թվի (էջ 71), Նորավանքի 1275 թվի (էջ 150), Ոշականի 1286 թվի (էջ 129), և Ոշականի 1288 թվի (էջ 130). «Ձեռնաւոր»-ների հիշատակումը 906 և 1086 թվականներին տես Ստեփաննոս Որբելյանի մոտ՝ «Պատմութիւն նահանգին Սիսական», Թիֆլիս 1911, Գլ. ԽԳ. և Կ, էջ 233 և 327: Հիմտե նաև նույն յերկում՝ էջ 367, 417 (Դուլի ԿԵ և ԿԶ):

«Եւ է այս գեղ ազատ յամենայն հարկէ ի պատրոնաց, ի ձեռնաւորաց, ի դուղակահանաց»:

2. Վիմական տարեգիր, եջ 150՝ Նորավանք, *1275 թ.

«Ու զՀալէձորոյ հարկն սահմանեցաք ի տարում վաթսուն սպիտակ տայ, այլ ազատ է յամէն հարկաց. այլ ոչ ամիրայ, ոչ պարոն, ոչ ձեռնաւորի ոչինչ հաշիւ չկայ հետ Հալէձորոյ. ոչ շոր տայ՝ ոչ այլ ոչ ուր»:

3. Վիմական տարեգիր, եջ 130՝ Օշական, 1288 թ.

«Ի թուականին չլէ յառաջնորդութեան տէր Համազասպայ եւ ի պարոնութեանն Սահմադիրնին և իւր որդւոցն Ամիրբէկին և Հազարբէկին եւ Գէշմարդս էի ամիրայ և Հաւիկս ձեռնաւոր, թողաք զսք կարապետին այգեացն զՅաւշականու, զՄիրինու զձեռնաւորին զհարկն զինչ որ կայր»:

Վերջին վկայութեան մեջ հիշված ձեռնաւորի հարկը հանդիպում ե նաև 1296 թվի Հոփսիմեյի վանքի հետևյալ արձանագրութեան մեջ.

4. Վիմական տարեգիր, եջ 138՝ Հոփսիմեյի վանք, 1296 թ.:

«Թողաք զՀոփսիմոցս զբարակին շարիատն եւ զհանախն բարակի հակն»:

«Հանա» ելին անվանվում, ինչպես հայտնի յե, թաթարական տիրապետութեան շրջանում վարչական ու հարկահան պաշտոնյաները, ուստի շահնայի հարկը-ն այս վկայութեան մեջ, իմ կարծիքով, նույնն է, ինչ վոր «ձեռնաւորի հարկ»-ը:

Արդ՝ ի նկատի առնելով վերոհիշյալ բոլոր վկայութեանները, նաև նրանց բովանդակութեան վերլուծումը, յետ յենթադրում եմ, վոր XI-րդ դարի «Թաստակ»-ը և XIII-րդ դարի «ձեռնաւոր»-ի կամ «շահնա»-ի հարկը, հավանորեն, լրացուցիչ տուրք են, վոր ստանում եր վարչական պաշտոններ, քաղաքներում՝ «մուխթասիպ»-ը, իսկ գյուղական վայրերում՝ «ձեռնաւոր»-ները կամ «շահնա»-ները:

Հիմնվելով Անիի 1046—1050 թվի արձանագրութեան վրա՝ մենք յենթադրեցինք, վոր «Թաստակ»-ի քանակը հավասար է յեղել հիմնական բնահարկի $\frac{1}{4}$ -ին: Այդ տոկոսը կարող եր սովորական ու ընդունված լինել XI-րդ դարում: Ինչ վերաբերվում ե XIII-րդ դարի «ձեռնաւոր»-ի կամ «շահնայ»-ի հարկին, նրա տոկոսը հայտնի չէ, և դժվար ե, իհարկե, անվերապահորեն պնդել, վոր նույն $\frac{1}{4}$ -րդ տոկոսը պահպանված կըլիներ և հետագա այդ դարում:

Վոր XI-րդ դարի «Թաստակ»-ը, իրոք, «շարիատ»-ի կամ «պախտ»-ի $\frac{1}{4}$ -րդ մասն ե յեղել, այդ, իմ կարծիքով, հաստատվում ե վնչ միայն Անիի 1046—1050 թվի արձանագրական վկայութեան քննութեամբ, այլ և «Թաստակ» բառի ստուգաբանութեամբ:

Վորքան ինձ հայտնի յե, «Թաստակ»-ը մինչև այժմ դեռ մեկնված չէ: Յես առաջարկում եմ, այդ բառի հետևյալ մեկնութեանը: «Թաստակ»-ը, իմ կարծիքով, բարդ բառ ե, վոր կազմված ե «թաստ» (=քառորդ) և «տակ»

¹ Ուղղելի թերեւ «շարիատայ»:

(=դաթ, —պատիկ) բառերից: «Թասու-տակ»-ը համառոտվելով ստացվել է «թասուտակ»:

«Թասուտակ»-ն, վոր փոխ առած բառ է պարսկերենից (=նոր պարսկ. *tasu*)¹, հայերենում, ինչպես հայտնի յե, յերեք զարեհատի կշիռ եր է «դանգ»-ի $\frac{1}{3}$ -ը մասը: Միևիթար Գորի Դատաստանագրքից պիտենք, վոր «դանգ»-ը է «թասուտակ»-ն գործածական են յեղել նրա ժամանակ կոտորակային թվերի համար², Նույնը հաստատում են նաև վիմական արձանագրությունների վկայությունները³:

«Թասուտակ»-ի կոտորակային մեծությունը կախված եր հաշիվների հիմնական միավորից: Յեթե հիմնական միավոր ընդունվում եր մեծ «դահական»-ը, վորը հավասար եր 6 «դանգ»-ի, «թասուտակ»-ն վորպես «դանգ»-ի $\frac{1}{3}$ -ը մասը, ստանում եր $\frac{1}{24}$ -ը իմաստ⁴, իսկ յեթե հիմնական միավոր համարվում եր մեծ «դահական»-ի կեսը կամ «պոտատ դեկան»-ը, վորը հավասար եր յերեք «դանգ»-ի⁵, «թասուտակ»-ն համապատասխան եր դառնում $\frac{1}{12}$ -ի:

Լինելով «դանգ»-ի $\frac{1}{3}$ -ը, իմ կարծիքով, «թասուտակ»-ն ունեցած կըլինեն նաև $\frac{1}{3}$ -ի նշանակություն այն դեպքերում, յերբ հաշվի հիմնական միավոր կընդունվիր վեթե մեծ «դահական»-ը կամ նրա կեսը՝ «պոտատ դեկան»-ը, այլ «դանգ»-ը:

Կարևոր է ու ուղադրավ այդ տեսակետից, վոր պահվածներենում *tasum*-ը ունեցել է, պարզապես, $\frac{1}{3}$ -ը ի նշանակություն⁶:

Ինչ թվում է, վոր կոտորակային հենց այս վերջին նշանակությունն ունեցած պիտի լինի «թասուտակ»-ն «թաս-տակ» կամ «թասու-տակ» բառի մեջ: Նույն բառի յերկրորդ մասը «տակ», իբրև թվական անունների վերջավորություն, նշանակում է, ինչպես հայտնի յե «դաթ» կամ «—պատիկ», որինակ՝ «երկուտակ», «երեք-տակ» են: Այս բարդումը հին է է հանդիպում է արդեն Որենագրութ. մոտ. տես Որ. Բ, գլ. Է՝ «է առանց ոսկւոյ է ականց, զկրտսեր մարգարիտն երեքտակեան վարսակալ ածել» (Տփղիս 1913, էջ 110),

«Թասուտակ»-ը կամ «թաս-տակ»-ը կազմված է, ուրեմն, նույն ձևով, ինչպես է «երկուտակ»-ը կամ «երեք-տակ»-ը է նշանակում է մեկ չորրորդ դաթ կամ մաս:

Անիի 1046-1050 թվի արձանագրական վկայության վերև ա-

1 H. Hübschmann, Armenische Grammatik, Leipzig 1895, էջ 266.

2 Դատաստանագրք, մասն առաջին, ձի, էջ 287, մասն յերկրորդ, ԿԲ, էջ 372, ԿԴ, էջ 378, ԿԵ, էջ 379-381.

3 Վիմական տարեգիր, էջ 58, 59, 74 ևն.

